

# Շոկոլադային ակցիա 3

Բոլորս էլ հիշում ենք, որ Հրայրը, որպես կանոն, իր քրոջ երեխաներին ամեն շաբաթ շոկոլադ էր նվիրում: Այն խանութը, որտեղից Հրայրը միշտ հրուշակեղեն էր գնում, հայտարարել է մի նոր ակցիայի մասին:

Ակցիան կայանում է հետևյալում. խանութի ցուցափեղկում ցուցադրված է  $N$  հատ կոնֆետ, որոնք ունեն  $a_0, a_1, a_2, \dots, a_N$  քաշեր: Եթե կա այնպիսի միջակայք ( $l$  և  $r$  թվեր), որ այդ միջակայքում գտնվող կոնֆետների քաշերը ( $a_l, a_{l+1}, \dots, a_r$ ) չկրկնվեն և կազմեն հաջորդական թվերի բազմություն, ապա ակցիայի շրջանակում կարելի է ստանալ այդ կոնֆետները լիովին անվճար:

Ամեն գնորդ կարող է մասնակցել ակցիային միայն մեկ անգամ: Հրայրի քրոջ երեխաները դեռ շատ փոքր են, և նրանց համար առավել հետաքրքիր է կոնֆետների քանակը, ոչ թե գումարային քաշը, այնպես որ Հրայրը ցանկանում է որքան հնարավոր է շատ կոնֆետ ստանալ անվճար:

Պահանջվում է գտնել թե ամենաշատը քանի կոնֆետ կարող է Հրայրը ստանալ անվճար:

## Մուտք

Մուտքի առաջին տողում տրված է  $N$  ( $1 \leq N \leq 5000$ ) բնական թիվը:

Մուտքի երկրորդ տողում տրված են  $a_1, a_2, \dots, a_N$  թվերը: ( $0 \leq a_i \leq 10^9$ ):

## Ելք

Ելքում պետք է արտածել մեկ թիվ՝ ամենաշատը քանի կոնֆետ կարող է Հրայրը վերցնել անվճար ակցիայի շրջանակում:

## Օրինակ

**Մուտք.**

15

6 5 1 4 2 3 4 9 7 8 6 7 7 7 7

**Ելք.**

6